Շատ անգամ իմ հաջողությունների առթիվ ես հիշել եմ իմ երիտասարդ տաղանդավոր այն ընկերներին, որոնք արտասահմանում դերվեցին և հնարավորություն չունեցան աճել ու զարգանալ հայրենիքում, ծառայել ժողովրդին։

Այժմ այդ հնարավորությունը մեր պետությունն ստեղծում է լայնորեն։ Նրանք չալու են նվիրվելու սոցիալիստական շինարարության պատմական մեծ գործին և մասնակից են դառնալու մեծ վերածննդին։ ՍՍՌՄ Ժողկոմսովետի պատմական որոշումը արտասահմանի մեր հայրենակիցների համար բացում է նոր դարաշրջան, նոր երջանիկ կյանքի համար, կուլտուրական վերելքի համար՝ հարազատ հողում, Սովետական Հայաստանում։

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Արվեստի վաստակավոր գործիչ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՆՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ

Նրանք Հայրենիք են վերադառնում, Հայրենիք, որի մի մասը ավերված է թշնամու ձեռքով, որտեղից նրանց անջատեց սրի ու սարսափի զարհուրանքը միայն։ Նրանք այժմ ճանաչում են, և իրոք ունեն այժմ միայն մի Հայրենիք—Սովետական Հայաստան։ Միայն Սովետական Հայաստանն է, իրականն ու հնարավորը։ Միայն Սովետական Հայաստանն է, որ պիտի ապրի, միայն Սովետական Հայաստանի բախտի հետ կարող է իր կյանքն ու ապագայի հույսերը կապել համայն հայությունը։

Հայրենիքները դյուրին չեն կառուցվում, հայրենիքը պետք է փորձել ստեղծել, որ կարելի լինի ձեռք բերել այն ծանրակշիռ համաստությունը, թե որքան դժվարին և տաժանելի գործ է այդ հայրենիք ձեռք բերելը։ Հայության արյունալի պատմության օրինակը ու խրատը գոնե հայերը լավ պիտի իմանան։ Դյուրին է կորցնել հայրենիքը, բայց դժվար է վերադառնել այն, երբեմն էլ անկարելի... Անշուշտ հայությունը դյուրին ու անպայքար չկորցրեց իր հայրենիքի մեծագույն մասը։ Արյունով ու քրտինքով պաշտպանեց հազարամյակներ հաշվող իր հայրենիքը։ Սակայն պատմությունը խնայել չէր կարող միշտ։ Պատմությունը լքի հայությանը։ Եվ հայության կյանքը կիսրգվեր ընդմիշտ, եթե նոր պատմության հրաշագործ ձեռքը չմեկներ դեպի հայությունը և նորից չվերակոչեր դեպի կյանք։

Այո, սրի ու սարսափի զարհուրանքը միայն անջատեց հայությանը իր հայրենիքից։ Հայկական բանաստեղծությունը հատուկ երգերի հատորներ ունի «զարիպի երգեր», որոնք սրտակսկիծ ողբեր են հայրենազուրկ հայության, որոնց հայրենապաշտ սիրտը իզուր տենչացել է, մեղմել իր հայրենաբաղձության ցավը։ Ինչ օտար երկրների շահախնդրության խոսք կարող էր լինել այն հայության մասին, որ երեք հազար տարի արյուն թափեց իր հայրենիքը պաշտպանելու և այնտեղ մնալու համար... Եվ մնաց էլ...

Հայրենազուրկ հայությունը հայրենիք է վերադառնում։ Դա ամենաբնական գործն է։ Ինչ ունի հայությունը օտար երկինքների տակ, հազար ու մի պատրանքների ենթակա։ Նա պիտի ապրի իր հայրենիքում, ջանա, ստեղծագործի իր սեփական տանը։ Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը։

ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումները բարձրագույն մեծահոգության, աննախընթաց մեծագործության մի ակտ է։ Ջղում ենք մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի մեծ սրտի ջերմությունը այդ գործի մեջ։ Նա փրկել է շատ հայրենիքներ, ծաղկեցրել շատ ժողովուրդներ, փրկել ու ծաղկեցնում է նաև Սովետական Հայաստանը։ Թող դա տուն և ծաղկի տարագիր հայությունը։

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)